



Սույն թվականի մարտի 11-ին Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի և Համայնքային համախմբման և աջակցության կենտրոնի միջև ստորագրված պայմանագրի համաձայն, Ալավերդու տարածաշրջանում Համայնքային համախմբման և աջակցության կենտրոնն իրականացնելու է «Թափանցիկ և հաշվետու հանքարդյունաբերություն» դրամաշնորհային ծրագիրը: Այն ֆինանսավորվում է ԱՄՆ ՄՁԳ կողմից՝ «Թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում՝ քաղաքացիական հասարակության մասնակցության միջոցով» ծրագրի շրջանաակներում:

Ծրագրի նպատակն է.

նպաստել ՀՀ-ում հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ կառավարմանն ուղղված առաջարկությունների ներդրմանն ու կիրառմանը ՀՀ Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա, Շնող և Օձուն համայնքներում: Բարձրացնել հանրային ներգրավվածության մակարդակը՝ Արդյունահանող Ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետև՝ ԱՊՊՊ) շրջանակներում իրականացվող գործունեությանը: